

Ձեկույց

Տիկնայք և պարոնայք, պարոն նախագահ, հարգարժան կոլեգաներ

Անկասկած ողջունելի է մարդու իրավունքների միջազգային դատական պաշտպանության ինստիտուտները համակողմանի բարելավելու նախաձեռնությունը և որպեսզի այն արդյունավետ լինի, կարծում եմ, ի սկզբանե մենք պետք է պատրաստ լինենք համարժեք ուշադրություն դարձնելու մի շարք մարտահրավերների վրա, որոնք նկատելի են արդեն այսօր, իսկ նպաստավոր պայմանների դեպքում պարզապես կձախտղեն յուրաքանչյուր արդարացի գործ:

Ես չեմ պատրաստվում հանգամանորեն անդրադառնալ այդ և նմանաբնույթ այլ հարցադրումների առնչությամբ հայկական պատվիրակության դիրքորոշումների վրա, քանզի դրանք առանձին փաստաթղթով ներկայացված են կազմակերպիչներին:

Կփորձեմ անդրադառնալ որոշ էական հարցադրումների վրա: Նախ, կարծում եմ, որ մենք հետևողական պետք է լինենք, որպեսզի ինչպես ներպետական դատական ատյանները, այնպես էլ՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը կարողանան ծերբազատվել որևէ կերպ զուտ քաղաքական խնդիրներ լուծելու, առավել ևս այդ հարցում գործիք դառնալու վտանգից: Ցավոք, գործող ընթացակարգերն այնպիսին են, որ լայն հնարավորություն են տալիս, որպեսզի բարձր դատարանը ևս կամա, թե ակամա ներքաշվի զուտ քաղաքական խնդիրների լուծման մեջ:

Անհարկի և անհիմն գանգատների մեծաքանակ լինելն, իսկապես մտահոգող է, սակայն անկեղծ նկատենք, որ դրանց մեծ մասը կազմակերպվում է բառիս բուն իմաստով քաղաքական այն ուժերի կողմից, որոնք հետապնդում են ոչ թե մարդկանց իրավունքների պաշտպանության, այլ բացառապես քաղաքական խնդիրներ լուծելու և քաղաքական կտրվածքով ճնշումներ գործադրելու նպատակ:

Վերջին հաշվով, պատահական չէ, որ երբեմն կարճ ժամկետում ստացվում են մի քանի հարյուրի հասնող գանգատներ, որոնք ոչ միայն բովանդակությամբ, այլև՝ ձևական առումով գրեթե միատարր են: Այս հնարքը, ի դեպ, օգտագործվում է ոչ միայն միջազգային հարաբերություններում գերակշիռ դիրք ունենալու, այլև ներպետական քաղաքականությունում ընդդիմություն և իշխանություն հարաբերություններում միմյանց նկատմամբ ճնշումներ գործադրելու նպատակով: Խնդրում եմ նկատի ունենալ, որ խոսքը բնավ իրավաչափ ներադեցության մասին չէ:

Կարծում եմ, վերը նվաճը հուշում է, որ հարկ է հստակ տարանջատել միջպետական գործերը՝ մասնավոր գործերից:

Այսպիսով, խնդրում եմ ընդունել, որ մեծաքանակ գանգատների առկայությունը հաճախ պայմանավորված է ոչ թե իրավական գիտելիքների պակասով, դատարանի նախադեպային իրավունքի չիմացությամբ, այլ՝ դրանք լավ տիրապետող ուժերի կողմից կոնկրետ ծրագրեր իրականացնելու մտադրությամբ: Հավելեն միայն, որ քաղաքական այդ խրթին հարցադրումների մեջ ներքաշվելով դատարանը, ի վերջո, զրկվում է հիրավի իր առաքելությունն իրականացնելու հնարավորությունից:

Իհարկե, հակված չեմ բոլոր խնդիրները քննարկել բացառապես քաղաքական շարժառիթներով, քանզի պարզ է, որ առանց համարժեք իրավական լուծումների հնարավոր չէ հաղթահարել բարդությունները: Հաջորդ իմ ելույթում կփորձեմ անդրադառնալ հենց մեր կողմից ծրագրավորված քայլերին:

Շնորհակալություն ուշադրության համար:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար
Գևորգ Դանիելյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

18.02.2010թ.
Զեկույց

Տիկնայք և պարոնայք, պարոն նախագահ, հարգարժան կոլեգաներ:

Ես ուզում եմ նկատել, որ համամիտ եմ Եվրոդատարանի ներկայացուցիչների և իմ գործընկերների հետ, որոնք գտնում են, որ բարեփոխումների շրջանակը պետք է ներառի նաև ներպետական ողջ համակարգը՝ ինչպես դատական ատյանները, այնպես էլ՝ պետական իրավասու մարմինները:

Հակիրճ ներկայացնեմ մեր կողմից նախընտրելի քայլերը՝

- օրենքները վերանայելիս նախագծերը պարտադիր քննարկվում են

Եվրոդատարանի նախադեպային իրավունքի պահանջների տեսանկյունից:

Միաժամանակ, ներդրվել է իրավական ակտերի սոցիալական ներազդեցության փորձաքննության ինստիտուտ, որը հնարավորություն է տալիս կանխորոշելու տվյալ ակտի հնարավոր հետևանքները՝ մարդու իրավունքների երաշխավորվածության առումով,

- Եվրոդատարանի նախադեպային դատական ակտերը շուտով համարվելու են նոր հանգամանքներ՝ դատական վերջնական ակտերը վերանայելու համար,

- հստակ կարգավորվել են ոչ միայն Եվրոդատարանի դատական ակտերն անվերապահորեն կատարելու, այլև դրա համար մեղավոր պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու հարաբերությունները:

Ներպետական բարեփոխումներն այս ոլորտում շարունակվում են: Նկատեմ միայն, որ ակնկալում ենք համարժեք բարեփոխումներ նաև միջազգային կտրվածքով:

Մասնավորապես, կարծում ենք, արդիական են հետևյալ հարցադրումները՝

- սահմանազատել հիրավի մարդու իրավունքների խախտումներին վերաբերող զանգատները՝ միջպետական վեճերին առնչվող խնդիրներից և վերջիններիս համար սահմանել քննարկման հատուկ ընթացակարգեր,

- ներդնել դատական տուրքի ինստիտուտը՝ սահմանելով արտոնություններ անվճարունակ մարդկանց համար,

- արմատապես վերանայել փոխհատուցում սահմանելու ընթացակարգերը, քանզի դրանք բացառապես ներպետական խնդիրներ են և անհարկի ծանրաբեռնում են միջազգային դատական ատյանը:

Համոզված ենք, որ բոլորս նայում ենք նույն ուղղությամբ և որոշ անխուսափելի տարածայնությունները չեն խոչընդոտի ձեռնարկված բարեփոխումները տրամաբանական ավարտին հասցնելու համար:

Ինչպես արդեն նշեցի, մեր նկատառումները համակարգված առանձին

փաստաթղթով ներկայացված են, իսկ սրանով թույլ տվեք ավարտել ելույթս:

Միաժամանակ, Հայաստանի պատվիրակության անունից իմ խորին

շնորհակալությունն եմ հայտնում այս կարևոր միջոցառման կազմակերպիչներին և Շվեդարայի մեր կոլեգաներին:

Շնորհակալություն ուշադրության համար:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար
Գևորգ Ղանիելյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

19.02.2010թ.